Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024.

«Ուլտրաձայնային ախտորոշման կարողությունների հզորացման ծրագրի ստորագրման արարողություն»

Երևան՝ 8 հոկտեմբերի, 2024թ

2024 թվականի հոկտեմբերի 8-ին Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության Հանրապետական ինստիտուտում տեղի ունեցավ «Երևանի ուլտրաձայնային ախտորոշման կարողությունների հզորացման ծրագրի» (մինչև 72,830 ԱՄՆ դոլար) ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՕԿԻ Յուտական և Հանրապետական ինստիտուտի տնօրեն դոկտոր Ռազմիկ Աբրահամյանը, ինչպես նաև ինստիտուտի բուժանձնակազմը, որոնց ներկայությամբ ստորագրվեց դրամաշնորհի պայմանագիրը:

Այս ծրագիրը նպատակ ունի ընդլայնել ինստիտուտի ուլտրաձայնային ախտորոշման հնարավորությունները՝ տրամադրելով ուլտրաձայնային հետազոտության մեկ նոր սարքավորում: Այս ծրագրի արդյունքում տարեկան մոտ 10,950 հղի կանայք (ներառյալ մոտ 1,500 Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներ) հնարավորություն կունենան օգտվելու կատարելագործված ուլտրաձայնային հետազոտություններից: Ակնկալվում է, որ սա կնպաստի մոր և մանկան առողջության բարելավմանը ինչպես տեղի բնակիչների, այնպես էլ տեղահանված անձանց համար՝ հնարավորություն տալով ավելի լավ հայտնաբերել անոմալիաները, որոշել համապատասխան բուժման պլանները և ընտրել ծննդաբերության օպտիմալ մեթոդներ:

2018 թվականին «Սեռավարակով հղի կանանց բուժման նպատակով բժշկական սարքավորումների տրամադրման ծրագրից» հետո սա ինստիտուտի ստացած երկրորդ աջակցությունն է Ճապոնիայի կառավարության կողմից: Բացի այդ, 2006 թվականին ինստիտուտը ստացել է բժշկական սարքավորումների օգնություն JICA-ի «Վերարտադրողական առողջության ծրագրի» կողմից, և այդ ժամանակ տրամադրված ինկուբատորները մինչ օրս օգտագործվում են ցածր քաշով նորածինների խնամքի համար: Ինստիտուտի տնօրեն դոկտոր Աբրահամյանն իր երախտագիտությունը հայտնեց՝ նշելով. «Ճապոնիան արդեն երկար տարիներ է աջակցում է Հայաստանում մոր և մանկան առողջության բարելավմանը, և մենք շատ ուրախ ենք այս նոր ծրագրի հաստատման համար:»

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրում

Դեսպան Առկին պարգևաբանումներ է ստանում Ճապոնիայի կողմից տրամադրված բժշկական սարքավորումների վերաբերյալ

Տնօրեն Աբրահամյանը շնորհակալության խոսքեր ուղղեց Դեսպան Առկիին

Ստորագրման արարողությանը ներկա բժիշկները